



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

17.11.2014 թ. N

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի' ուսանողներ

Ջերմորեն շնորհավորում եմ Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ:

Ուսանողական շրջանը երիտասարդ մարդու կյանքի ամենանշանակալի ու կարևորագույն հատվածն է, որը մեծապես նպաստում է անհատի կայացմանը և ուղեկցվում բազմապիսի հիշարժան դրվագներով:

Համոզված եմ, որ Ձեր եռանդի, լավատեսության և արդի մտածողության շնորհիվ նպաստելու եք մեր հայրենիքի շարունակական զարգացմանն ու առաջընթացին, քանզի Դուք այսօր աշխարհին եք ներկայանում մեր ազգի ինքնատիպությամբ և պատմամշակութային արժեքներով ու միևնույն ժամանակ ներնուծում եք նոր ավանդույթներ՝ այդ ամենը արդյունավետորեն համադրելով միմյանց հետ:

Տոնական այս օրվա շրջանակներում անհրաժեշտ եմ համարում կրկին ընդգծել երիտասարդության նկատմամբ ցուցաբերվող պետական հոգածության բոլոր դրսևորումները, որոնք տարեցտարի ընդլայնում են իրենց ուղղությունները:

Դարձյալ շնորհավորում եմ Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ և մաղթում անընդհատ հաջողություններ ու ամենայն բարիք:

Հարգանքներով

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ